

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/2

19 մայիսի 2015 թ.

Քննարկվեց փաստաբան Տիգրան Եգորյանի 13.04.2015 թ-ի բողոքը «ՖՆ իրավաբանական վարչության պետի տեղեկատվություն տրամադրելու մերժման մասին որոշման դեմ:

Տիգրան Եգորյանի բողոքում բերված փաստարկները.

Փաստաբան Տիգրան Եգորյանը (այսուհետ նաև բողոքաբեր) հայտնում է, որ հանդիսանում էմ թիվ ԵԱԴԴ/0004/01/13 քրեական գործով մեղադրյալ Սմբատ Մարգարյանի պաշտպանը: Գանգատաբերը վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով 26.11.2014 թ-ին «Ֆինանսների նախարարություն է մուտքագրել փաստաբանական հարցում, որով խնդրել է հայտնել հետևյալ տեղեկատվությունը՝ արդյոք Մասիսի կամ Արտաշատի ասրածքային հարկային տեսչությունում 2005–2012 թ.թ. որևէ հաստիք զբաղեցրել է Պարզև Խաչատրյանը: Դրական պատասխանի դեպքում խնդրել է տրամադրել նաև վերջինիս զբաղեցրած հաստիքը/պաշտոնը և պաշտոնավարման ժամանակահատվածը:

Սույն հարցմանն ի պատասխան 05.12.2014 թ-ին «Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետը հայտնել է դիրքորոշում, համաձայն որի քաղաքացի Պարզև Խաչատրյանի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման: Հատկանշական է այն, թե ինչպիսի իրավական հիմքեր են վկայակոչվել և դրանցով փորձել հիմնավորել այդ որոշումը: Մասնավորապես, վկայակոչվել է «Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասը, սակայն առկա չէ այդ դրույթի հիփոթեզով նախատեսված պայմաններից և ոչ մեկը: Այսինքն, հարցվող տեղեկատվությունն իրենից չի կարող ծառայողական գաղտնիք ներկայացնել, քանի որ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով չունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա որևէ օրինական հիմք, որը սահմանափակում է վերոնշյալ տեղեկատվությունն ազատորեն ստանալու հնարավորությունը: Ինչ վերաբերում է 141-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա այն վերաբերելի չէ, քանի որ սահմանում է հետևյալ իրավակարգավորումը՝ Տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով: Սույն հոդվածի վերլուծությունից չի հետևում, որ միայն օրենքով սահմանված դեպքերում տեղեկությունը կարող է ազատ լինել և ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք չհանդիսանալ: Այս պարագայում անհասկանալի է դառնում, թե ինչ տրամաբանությամբ է այս հոդվածը վկայակոչվել:

Բերված հաջորդ իրավական հիմքը, այն է՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 10-րդ հոդվածները, նույնպես կիրառելի չեն հետևյալ պատճառաբանությամբ: Այո, «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 3-րդ մասը սահմանում է խորհրդապահական տեղեկատվության մատչելիության օրենքով սահմանափակված լինելը, սակայն անդրադարձ չի կատարվել այն հարցին, թե որ

օրենքով և ինչ ծավալով է սահմանափակվում այդ տեղեկատվության մատչելիությունը:

Վերջին մեջբերված իրավական հիմքը, այն է՝ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, որով սահմանվում է հարկային գաղտնիքի հասկացությունը, առհասարակ ոչ մի վերաբերելիություն չունի հարցմանը, քանի որ հարցմամբ չի խնդրվել տրամադրել Պարզև Խաչատրյանի վերաբերյալ որևէ հարկային գաղտնիք, կամ դրա հետ կապված այլ տեղեկություն:

Կատարված հարցմամբ հայցվել է այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կրում է բացառապես հրապարակային բնույթ և գտնվում է հանրային իրավահարաբերությունների տիրույթում: Ավելին, այդ տեղեկատվության տրամադրման պարտականությունը պայմանավորված է հանրային շահով, իսկ չտրամադրումը չի կարող արդարացվել և/կամ պատճառաբանվել մասնավոր կյանքի պաշտպանությամբ, քանի որ հարկային տեսչության աշխատակցի պաշտոնը Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայողի պաշտոն է, իսկ հարցադրումն էր՝ զբաղեցրել է արդյոք Պարզև Խաչատրյանն այդ հանրային ծառայողի պաշտոնը, թե ոչ: Հակառակը, եթե առաջնորդվենք պատասխան գրության տրամաբանությամբ, ապա հարցման պատասխանը և առհասարակ պաշտոնական այլ գրագրությունները պետք է չստորագրվեն պաշտոնատար անձանց կողմից, քանի որ դրանով բացահայտվում է ստորագրող անձի ինքնությունը և զբաղեցրած պաշտոնը:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 հոդվածներով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 76-րդ հոդվածներով գանգատաբերը խնդրում է վերացնել որոշմամբ իր վստահողի իրավունքների խախտումը և տրամադրել հարցմամբ հայցված տեղեկատվությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ բողոքաբերն իր վստահողին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված 26.11.2014 թ-ի գրությամբ խնդրել է հայտնել հետևյալ տեղեկատվությունը՝ արդյոք Մասիսի կամ Արտաշատի տարածքային հարկային տեսչությունում 2005–2012 թ.թ. որևէ հաստիք զբաղեցրել է Պարզև Խաչատրյանը: Դրական պատասխանի դեպքում խնդրել է տրամադրել նաև վերջինիս զբաղեցրած հաստիքը/պաշտոնը և պաշտոնավարման ժամանակահատվածը:

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 05.12.2014 թ-ի գրությամբ քաղաքացի Պարզև Խաչատրյանի վերաբերյալ պահանջված տեղեկատվության տրամադրումը մերժվել է:

Սույն գործում առկա փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ բողոքաբերի կողմից քաղաքացի Պարզև Խաչատրյանի վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը ենթակա չէր տրամադրման, հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն.
«Փաստաբանը իրավունք ունի՝

3) դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տասնօրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այլ բան է նախատեսված, կամ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն.
«1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն. «1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.»:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով»:

Իր հերթին, ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավանորմերի դրույթները, ինչպես նաև այն հանգամանքը, որ փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից չի ներկայացվել քաղաքացի Պարգև Խաչատրյանի վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը ստանալու իրավասությունը հավաստող փաստաթուղթ (լիազորագիր), այսինքն, բացակայում է քաղաքացի Պարգև Խաչատրյանի համաձայնությունն՝ իր մասին տեղեկատվությունը բողոքաբերի կողմից ստանալու վերաբերյալ, հետևապես վերջինիս պահանջված տեղեկատվությունը ենթակա չէր տրամադրման:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված պնդումներին, որ կատարված հարցմամբ հայցված տեղեկատվությունը կրում է բացառապես հրապարակային բնույթ և գտնվում է հանրային իրավահարաբերությունների տիրույթում, ապա Հանձնաժողովը գտնում

է, որ նշված պնդումները հիմնավոր չեն, քանի որ հայցված տեղեկատվությունը, ըստ էության, վերաբերվում է քաղաքացի Պարզև Խաչատրյանի անձնական կյանքին, որի գաղտնիությունը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության վերը նշված նորմերով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Փաստաբան Տիգրան Եգորյանի բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի տեղեկատվություն տրամադրելու մերժման մասին որոշման դեմ, մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

